Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3750

ԹՇՈՒԱՌ ԵՂԻՍԱԲԷԹ

ՎԷՊԻԿ

Թարգմանեց

ԴԱՒԻԹ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑ

ԹԻՖԼԻՍ

Тип. М. Вартанянца, Троиц. пер. д. № 11.

Տպարան Մովսէս Վարդանցեանցի

1891

1403

68

2011

891 71
4-28

25 SEP 2006

Ն. Մ. ԿԱՐԱՄԶԻՆ

ԹՇՈՒԱՌ ԵՂԻՍԱԲԷԹ

ՎԷՊԻԿ

Թարգմանեց

ԴԱՒԻԹ ՏԷՐ-ԴԱՒԹԵԱՆՑ



ԹԻՖԼԻՍ

Тип. М. Вартанянца, Троиц. пер. д. № 11.

Տպարան Մովսէս Վարդանեանցի

1891

Дозволено цензурою, Тифлисъ, 21-го Февраля 1891

113624-42

ՀԱՅԿՍՍՌ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ЗСФСР-Арм.ССР
Ա. Մասիսյանի անվան
им. А. Масисяна

9693-73

ԹՐՈՒԱՌ ԵՂԻՍԱՒԷԹ

Վ Է Պ Ի Կ

Գուցէ Մոսկուայի բնակիչներից շատերը այնպէս լաւ ծանօթ չեն քաղաքի շրջակայքի հետ, ինչպէս ես, որովհետեւ ինձպէս յաճախ ոչ ոք չի գնում դաշտը, ոչ ոք ինձանից աւելի հետիոտ չի թափառում առանց ծրագրի, առանց նպատակի՝ մարգագետինները, անտառները, ձորերը եւ դաշտակայրերը։ Իւրաքանչիւր ամառ գնում եմ զբօսնելու նոր եւ հաճելի տեղեր եւ կամ հին տեղերը նոր գեղեցկութեամբ։

Բայց ինձ համար ջոլորից աւելի ընդունելի եւ սիրելի տեղը այն տեղն է, ուր կանգնած է մռայլ գօթական ճաշա-

կով շինած Սիմէոնեան մենաստանի աշտարակը։ Այդ լեռան վերայ կանգնած աջ կողմում տեսնումես գրեթէ ամբողջ Մոսկուան, իւր բազմաթիւ բնակարաններով եւ եկեղեցիներով, որը ներկայանում է աչքի առջեւ իբրեւ մի ահագին ամֆիթէատրոն.— հրաշալի տեսարան, մանաւանդ երբ լուսաւորում է արեգակը, երբ երեկոյեան նորա բազմագոյն ճառագայթները ընկնում են անթիւ ոսկեայ գմբեթների, բազմաթիւ խաչերի վերայ, որոնք ամպերին են հասնում։ Ցածումը տարածւում են պարարտ, կանաչազարդ, ծաղկալից մարգերը, իսկ նոցա միւս կողմը դեղին աւազի վերայով հոսում է յստակ գետը, որ ծփում է ձկնորսական նաւերի թեթեւ թիերի շարժումից, կամ աղմկում է բեռնաւորուած նաւի ղեկի տակ, որ գալիս է Ռուսաստանի պտղատու երկիրներից եւ մատակարարում է ագահ Մոսկուային հաց։ Գետի միւս ափին երեւում է կաղնիների ծառաստանը, որի մօտ արածում են բազմաթիւ հօտեր, այնտեղ երիտասարդ հովիւները նստելով ծառերի

ստուերների՝ ներքոյ երգում են տխուր երգեր եւ սրանով կարճում են ամարային օրերը։ Նորա մօտ խիտ եւ կանաչ կնձնի (вязь) ծառերի մէջ փայլում է Դանիէլեան ոսկեգմբեթաւոր մենաստանը. աւելի հեռու, համարեա հորիզոնի ծայրին երեւում են Վարաբեւի կապոյտ լեռները։ Ձախ ափի վերայ երեւում են ընդարձակ դաշտեր՝ ծածկուած ցորենի հասկերով, անտառներ՝ խիտ ծառերով, երեք կամ չորս գիւղեր եւ հեռուից երեւում է Կալամին գիւղը իւր բարձր պալատով։

Յաճախ գալիսեմ այդտեղ եւ համարեա միշտ հանդիպումեմ գարնանը. գալիսեմ նաեւ աշնան ժամանակ, մռայլ օրերին՝ ողբալու բնութեան հետ միասին։ Հողմը դժոխային ձայնով շշում է ամայացած մենաստանի բարձր խոտերով ծածկուած պատերի, գերեզմանների եւ խուցերի մութ անցքերի մէջը։ Այնտեղ յենուելով աւեր դարձած գերեզմանաքարերին, ականջ եմ դնում ժամանակի խուլ հառաչանքին,

որից սիրտս սառառում է եւ դողում։ Երբեմն մոնումեմ խուցը եւ ներկայացնում աչքիս առջեւ այն անձանց, որոնք բնակւում էին այն տեղ, բայց աւա՜ղ—տխուր պատկերներ...։ Այստեղ տեսնումես ալեզարդ ծերին ծնկաչոք ընկած խաչելութեան առաջը աղօթելիս իւր երկրաւոր վախճանի շուտափոյթ գալստեան համար, պատճառ՝ որ նորա բոլոր զուարճութիւնները անյայտացան կեանքի մէջ, բոլոր զգացմունքները մեռան, բացի թուլութեան եւ հիւանդութեան զգացմունքից։ Այնտեղ դեռահաս աբեղան, գունաթափ երեսով, մռայլ հայեացքով նայում է դէպի դաշտը իւր ցանկապատ պատուհանի արանքներից, տեսնում է զուարթ թռչուններ եթերային ովկիանոսի մէջ ազատ լողալիս, տեսնում է եւ դառն արցունքն է թափում իւր աչքերից։ Նա տանջւում, թառամում, թօշնում է եւ զանգակի տխուր զօղանջունը մահ է գուժում ինձ։ Երբեմն տեսնումեմ տաճարի դռների գլխին նկարած հրաշքների պատկերները, որոնք կատարուել են այս

մենաստանի մէջ։ Այնտեղ երկնքից ընկնում էին ձիներ, մենաստանի քնակիչներին յարգեցնելու համար, երբ բազմաթիւ թշնամիներով էին պաշարուած։ Այստեղ Տէրտէրը պատկերը փախցնում էր թշնամիներին։ Այս բոլորը նորոգում են յիշողութեանս մէջ մեր հայրենեաց պատմութիւնը՝ այն առիւծ ժամանակների պատմութիւնը, երբ կատաղի թաթարները եւ Լիտուացիք հրով եւ արով աւերում էին Ռուսաց մայրաքաղաքի շրջակայքը եւ երբ ապաբախտ Մոսկուան, որպէս մի անպաշտպան այրի՝ միայն Աստծուց էր սպասում օգնութիւն իւր գժբնդակ թշուառութեանց համար։

Ամ. Մկրտչ. Տ.

Այս բոլորից աւելի գրաւում են ինձ Սիմէոնեան մենաստանի պարիսպները.— երբ մտաբերում եմ Եղիսաբէթի թշուառ բախտը—խե՜ղճ Եղիսաբէթ։ Ա՜խ, եւ սիրում եմ այն առարկաները, որոնք շարժում են սիրտս եւ ստիպում են ինձ թափել աչքերիցս ցաւագին արցունքներ։

Վանքի պարիսպներից եօթանասուն սաժէն հեռու, թըղտենիների անտառի մօտ, կանաչազարդ մարգագետնի մէջ տեղը կանգնած է դատարկ խրճիթը, առանց դռների, առանց պատուհանների եւ առանց յատակի։ Առաստաղը վաղուց կռացել էր եւ փլատակուել։ Այս խրճթի մէջ մեզանից քսան տարի առաջ բնակւում էր չքնաղագեղ Եղիսաբէթը՝ իւր պառաւ մօր հետ։ Եղիսաբէթի հայրը բաւական հարուստ գիւղացի էր, որովհետեւ նա սիրում էր աշխատել, լաւ հերկում էր գետինը եւ միշտ լաւ կեանք էր վարում։ Սակայն նորա մահից յետոյ կինը եւ դուստրը աղքատացան։ Վարձկանների ծոյլ ձեռքը վատ էր մշակում դաշտը, ուստի ցորենը դադարեցրեց իւր գեղեցիկ աճումը։ Նոքա ստիպուած էին վարձով տալ իրանց հողը եւ այն էլ շատ չնչին գնով։ Ուստի, խեղճ այրին համարեա անդադար աչքերից արցունք էր թափում իւր ամուսնու մահուան վերայ— որովհետեւ գեղջկուհիները եւս կարող են սիրել։ Օր ըստ օրէ նա սկսաւ թուլանալ

եւ վերջապէս այլ եւս չը կարողացաւ աշխատել։ Միայն Եղիսաբէթը, որ իւր հօր մահից յետոյ տանուտէրինգ տարեկան էր, միայն նա, չը խնայելով իւր քնքոյշ երիտասարդութիւնը, չը խնայելով իւր հազուագիւտ գեղեցկութիւնը, աշխատում էր օր ու գիշեր—հիւսում էր քաթան, գործում էր գուլպէք, գարնան ժամանակ ծաղիկներ էր վաճառում, իսկ ամառուայ ժամանակ հաւաքում էր մրգեղէններ եւ այդ բոլորը ծախում էր Մոսկուայում։ Զգայուն եւ բարի պառաւը, տեսնելով իւր դստեր անխոնջ աշխատանքը, յաճախ սեղմում էր նորան իւր ծանր բաբախող կրծքին, կոչում էր նորան Աստուծոյ ողորմութիւն, իւր կերակրիչ, ծերութեան մխիթարիչ եւ աղօթում ու փառաբանում էր Աստծուն, որ Նա վարձատրէ աղջկան այն բոլորի համար, ինչ որ նա անում էր մօրը։ «Աստուած տուաւ ինձ աշխատելու ձեռք, ասում էր Եղիսաբէթը, դու կերակրեցիր ինձ քո կրծքով եւ մանկութեան ժամանակ խնամեցիր ինձ, այժմ արդէն հասաւ ինձ հերթը քեզ խնամելու։

Բաւական է տրտմես եւ լաց լինես, մեր արցունքը չէ կարող թշուառ հօրս կենդանացնել։»

Բայց յաճախ քնքոյշ Եղիսաբէթը չէր կարողանում զսպել իւր արցունքը—ախ, նա մտաքերում էր, որ ունեցել է մի ժամանակ հայր, որը այժմ չը կայ։ Բայց մօրը հանդարտեցնելու համար աշխատում էր ծածկել իւր սրտի տրտմութիւնը եւ ցոյց էր տալիս իրեն հանգիստ եւ ուրախ։

—Հանդերձեալ կեանքում, սիրելի Եղիսաբէթ, պատասխանում էր նեղեալ եւ տխուր պառաւը, հանդերձեալ աշխարհում ես կը զադարեցնեմ իմ լացը։ Այնտեղ, ասում են, ամենքը ուրախ կը լինեն. ես ճշմարիտ ուրախ կը լինեմ, երբ կը տեսնեմ քո հօրը։ Միայն այժմ չեմ ուզում մեռնել.— ի՞նչ կը լինի արդեօք քո դրութիւնը առանց ինձ։ Ո՞ւմ մօտ պէտք է քեզ թողնեմ։ Ո՛չ, տայ Աստուած, որ առաջ տեղ գտնեմ քեզ համար, գուցէ յայտնուի մի բարի մարդ. այն ժամանակ օրհնելով ձեզ, սիրելի մանուկ-

ներս, կը խաչակնքեմ եւ խաղաղ կը պարկեմ խոնաւ հողի տակ։

Անցաւ երկու տարի Եղիսաբէթի հօր մահուանից յետոյ։ Մարգագետինը ծածկուեցաւ ծաղիկներով եւ Եղիսաբէթը եկաւ Մոսկուա իւր հետ շուշաններ բերելով։ Մի երիտասարդ գեղեցիկ պճնուած, համակրելի տեսքով, պատահեցաւ նորան ճանապարհին։ Նա ցոյց տուաւ իւր ծաղիկները եւ կարմրեց։

—Դու այդ ծախո՞ւմես, օրիորդ, հարցրեց նա ժպտալով։

—Ծախումեմ, պատասխանեց Եղիսաբէթը։

—Որքա՞ն արժեն։

—Հինգ կոպէկ։

—Այդ շատ արժան է։ Ահա՛ քեզ մի ռուբլի։

Եղիսաբէթը զարմանքից վոտահացաւ նայել երիտասարդի երեսին, որով աւելի եւս կարմրեց եւ աչքերը խոնարհեցնելով

դէպի գետինը, պատասխանեց նորան, որ ինքը չէ վերցնում այդ ռուբլին.

—Ինչի՞ համար.

—Ինձ գնից աւելին հարկաւոր չէ.

—Ես կարծումեմ, որ այն գեղեցիկ շուշանները, որոնք քաղուած են գեղեցիկ օրիորդի մատներով արժեն մի ռուբլի։ Եթէ դու հրաժարուումես դորանից, ահա՛ քեզ հինգ կոպէկ։ Միայն ես կը ցանկանայի գնել քեզանից ծաղիկներ, կը կամենայի, որ դու քաղէիր այն բոլորը միմիայն ինձ համար։ Եղիսաբէթը տուաւ ծաղիկները, վերցրեց հինգ կոպէկը, գլուխ տուաւ եւ կամենում էր գնալ, սակայն անծանօթը բռնելով նորա ձեռքից՝ կանգնացրեց։

—Ուր ես գնում այժմ, օրիորդ.

—Տուն։

—Բայց որտեղ է քո տունը.

Եղիսաբէթը յայտնեց նորան իւր բնակութեան տեղը եւ հեռացաւ։ Երիտասարդը այլ եւս չը կամեցաւ նորան պահել, երեւի այն պատճառաւ, որ մօտիկից անցնողները

ակսան կանգնել եւ նայելով նոցա վերայ, խորամանկութեամբ ծիծաղել։

Եղիսաբէթը վերադառնալով տուն, պատմեց մօրը այն բոլորը, ինչ որ իրեն պատահել էր ճանապարհին։—«Դու շատ լաւ ես արել, որ չես վերցրել այն ռուբլին։ Կարելի է այն մարդը մի որեւէ սրիկայ էր...»

—Ա՜խ, ոչ, մայրիկ, ես այդ չեմ կարծում։ Նա շատ բարի դէմք եւ գեղեցիկ ձայն ունէր։

—Բայց լաւ է, Եղիսաբէթ, կերակրուիլ իւր աշխատանքով եւ ձրի ոչինչ չը վերցնել։ Դու դարձեալ չը գիտես, սիրելիս, թէ ինչպէս չար մարդիկ կարող են խայտառակել խեղճ օրիորդին։ Իմ սիրտը ամեն ժամանակ չէ կարողանում իւր տեղը հանդարտ մնալ, երբ դու մանես գալի քաղաքում, ես այն ժամանակ միշտ սուրբ պատկերի առաջ մոմ եմ վառում եւ աղօթում առ Աստուած, որպէս զի պահպանէ քեզ բոլոր վտանգներից եւ դժբախտութիւններից։

Եղիսաբէթի աչքերը լցուեցան արտասուքով, նա գրկեց եւ համբուրեց մօրը։

Միւս օրը Եղիսաբէթը քաղեց ամենագեղեցիկ շուշաններ եւ հեռն առնելով, տարաւ քաղաք։ Նորա աչքերը կարծես թէ հանդարտ մի որեւէ բան էին փնտռում։ Շատերն էին կամենում նորանից ծաղիկներ գնել, բայց նա պատասխանում էր, թէ՝ նոքա ծախու չեն, եւ նայում էր այս ու այն կողմը։ Հասաւ երեկոն, նա պէտքէ վերադառնար տուն, ուստի ծաղիկները թափում է Մոսկուա գետը.—«Ո՛չ ոք չը տիրացաւ ձեզ». ասաց Եղիսաբէթը զգալով իւր սրտի տխրութիւնը։

Միւս օրը երեկոյեան նա նստած էր պատուհանի մօտ, մանում էր եւ ցածր ձայնով երգում էր մի տխուր երգ, բայց յանկարծ շփոթւում է եւ բացականչում. «Ա՜խ...» անծանօթ երիտասարդը կանգնած էր պատուհանի առջեւ։

—Ի՞նչ պատահեց քեզ. հարցրեց վա-

խեցած մայրը, որ նորա մօտ նստած էր։

—«Ոչինչ, մայրիկ, պատասխանեց Եղիսաբէթը երկչոտ ձայնով, ես միայն տեսայ նորան։

—Ո՞ւմը.

—Այն պարոնին, որը ինձանից ծաղիկներ գնեց։

Պառաւը նայեց պատուհանից։ Երիտասարդը այնպէս քաղաքավարի եւ գեղեցիկ ձայնով ողջունեց նորան, որ նա բացի լաւութիւնից, ուրիշ ոչինչ չը կարողացաւ նորա մասին մտածել։

—Ողջոյն ձեզ, բարի տիկին. ասաց նա, ես շատ յոգնածեմ, չունէ՞ք արդեօք թարմ կաթ։

Ծառայութիւն սիրող Եղիսաբէթը չը սպասելով իւր մօր պատասխանին՝ երեւի այն պատճառով, որ նա իւր մօրից առաջ էր ճանաչում, վազեց ներքնատուն, բերեց մի մաքուր ման (кринка) ծածկուած մաքուր կոթաւոր ըմպանակով, վերցրեց բա-

ժակը, լուաց, սրբեց սպիտակ քաթանով, լցրեց կաթնով եւ տուաւ պատուհանից երիտասարդին, սակայն իւր աչքերը խոնարհեցրած նայում էր գետնին։ Անծանօթը խմեց այն, որ իրեն թուաց աւելի համեղ քան եթէ առնէր Հեբայի ձեռքից նեկտարը։ Իւրաքանչիւրը կը գուշակէր, որ անծանօթը շնորհակալութիւն յայտնեց Եղիսաբէթին եւ գոհացաւ նորանից ոչ այնքան խօսքերով, որքան հայեացքով։ Ապա բարի պառաւը պատմեց նորան բոլոր իւր ցաւերը եւ մխիթարութիւնները՝ ամուսնու մահը, իւր դըստեր գեղեցիկ յատկութիւնները, նորա աշխատասիրութիւնը, քնքշութիւնը եւ այլն եւ այլն։ Անծանօթը լսում էր ուշադրութեամբ, սակայն հարկաւոր է արդեօք ասել, թէ աչքերը ո՞րտեղ էին... Եղիսաբէթը, երկչոտ Եղիսաբէթը յաճախ նայում էր երիտասարդի վերայ, սակայն փայլակը այնքան շուտով չէ փայլում եւ ամպերի մէջ անյայտանում, ինչքան նորա կապուտակ աչքերը պատահելով նորա հայեացքին խոնարհում էին դէպի գետինը։

—Ես կը ցանկայի, ասաց նա Եղիսաբէթի մօրը, որ քո դուստրը միմիայն ինձ վերայ ծախէր իւր աշխատութիւնը։ Այսպիսով նա պարտաւորուած չի լինի յաճախ գալու քաղաք եւ դու ստիպուած չես լինի նորանից հեռանալու։ Ես ինքս երբեմն կարողեմ մտնել ձեզ մօտ։

Այս ժամանակ Եղիսաբէթի աչքերում ուրախութիւն փայլեցաւ, որը սակայն իզուր էր կամենում ծածկել, նորա այտերը կարմրեցան, որպէս ամարային պարզ երեկոյի վերջալոյսը։ Պառաւը սիրով ընդունեց նորա առաջարկութիւնը, առանց կասկածելու թէ նա կարող է մի վատ դիտաւորութիւն ունենալ. եւ հաւատացրեց անծանօթին, որ Եղիսաբէթի մանած քաթանը եւ նորա գործած գուլպաները աւելի լաւ են ուրիշներից եւ շատ ժամանակ են դիմանում։ Արդէն մթնել էր եւ երիտասարդը կամենում էր գնալ։

—Բայց ի՞նչպէս են ձեզ կոչում, բարի եւ քաղցր պառաւն, հարցրեց պառաւը։

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
Ա. Մեսրոպի անվան
им. А. Месропа

—Ինձ կոչում են Էրաստ, պատասխանեց նա։

—Էրաստ, Էրաստ, արտասանեց ցած ձայնով Եղիսաբէթը եւ նա հինգ անգամ կրկնեց այս անունը, կարծես, թէ աշխատում էր անգիր անել։ Էրաստը, «մնաք բարեւ», ասելով գնաց։ Եղիսաբէթի աչքերը յառած մնացին նորա յետեւից, իսկ մայրը նստեց եւ ընկնելով մտածմունքների մէջ, բռնեց իւր դստեր ձեռքը եւ ասաց նորան.

—Ա՜խ, Եղիսաբէթ, եթէ քո ամուսնացուն էլ լինէր այդպէս...։ Այս խօսքերի վերայ Եղիսաբէթի ամբողջ սիրտը սկսաւ դողալ։

—Մա՜յրիկ, մա՜յրիկ, ինչպէս կարող է այդ պատահել. նա պարոն, իսկ ես մի գեղջկուհի...։

Եղիսաբէթը չ՚ասարտեց իւր խօսակցութիւնը։

Արդ՝ ընթերցողը պէտք է իմանայ, որ այդ երիտասարդը, այդ Էրաստը ազնուական էր եւ բաւական հարուստ, բնաւորու-

թեամբ բարեսիրտ, նորա հետ եւ հանճարեղ, սակայն թոյլ եւ թեթեւամիտ։ Նա թափառաշրջիկ կեանք էր վարում եւ միմիայն մտածում էր իւր զուարճութեանց վերայ, փնտռում էր նրանց աշխարհային զբօսանքների մէջ, սակայն յաճախ չէր յաջողւում գտնել, ուստի տխրում էր եւ գանգատւում իւր ճակատագրից։ Եղիսաբէթի գեղեցկութիւնը, հէնց առաջին անգամ հանդիպելիս՝ նորա սրտի վերայ տպաւորութիւն գործեց։ Նա կարդում էր վիպասանութիւններ, հովուերգութիւններ (идиллія), բաւական կենդանի արտայայտութիւն ունէր եւ յաճախ մտքով պանում էր դէպի այն ժամանակները (անցեալ եւ ապագայ) որոնց մէջ, եթէ հաւատալ բանաստեղծներին, բոլոր մարդիկը անհոգ զբօսնում էին մարգագետինների վերայ, լողանում էին մաքուր աղբիւրներում, համբուրւում էին որպէս տատրակներ, հանգստանում էին ծաղիկների տակ եւ իրանց օրերը անցկացնում էին զուարճալի տօնախմբութիւններով։ Նրան այնպէս էր թւում, թէ Եղիսաբէթի մէջ

գտաւ այն, ինչ—որ իւր սիրտը վաղուց որոնում էր։ «Բնութիւնը հրաւիրում է ինձ դէպի իւր գիրկը, դէպի իւր ուրախ զուարճութիւնները», մտածեց նա, եւ վճռեց գոնէ ժամանակաւորապէս թողնել այս մեծ աշխարհը։

Այժմ դառնանք դէպի Եղիսաբէթը։ Սկսաւ գիշերը.—մայրը օրհնեց իւր դստերը եւ մաղթեց նորան հաճելի քուն, բայց այս անգամ նորա ցանկութիւնը չը կատարուեցաւ։ Եղիսաբէթը շատ վատ տրամադրութեամբ քնեց։ Նորա հոգու նոր հիւրը՝ Էրաստի պատկերը այնպէս կենդանի ներկայանում էր նորան, որ նա շատ շուտ շուտ զարթնում էր եւ հառաչում։ Նախ քան արեգակի ծագելը, Եղիսաբէթը վեր կացաւ, գնաց Մոսկուա գետի ափը, նըստեց խոտերի վերայ եւ շփոթուած նայում էր սպիտակ ամպերին, որոնք լողում էին օդի մէջ եւ բարձրանալով վերեւ անհետանում էին։ Ամեն տեղ թագաւորում էր խաղաղութիւն։ Շուտով լոյսը բաց-

ուեց. արթնացան բոլոր արարածները, անտառները, թփերը կենդանացան, թռչունները թռան եւ երգեցին, ծաղիկները բարձրացրին իրանց գլուխները, որպէս զի արբենան լոյսի կենդանացուցիչ ճառագայթներով։ Այսուամենայնիւ Եղիսաբէթը դարձեալ նստած էր շփոթուած եւ տխուր։ Ա՜խ Եղիսաբէթ, Եղիսաբէթ, ի՞նչ պատահեց քեզ այժմ, քնելով թռչունների հետ միասին, նոցա հետ էլ ուրախանում էիր առաւօտեան, եւ քո մաքուր ուրախալի հոգու արտայայտութիւնը փայլում էր աչքերիդ մէջ այնպէս՝ ինչպէս արեգակը փայլում է երկնային ցօղի կաթիլների մէջ. բայց այժմ դու լուռ ես եւ ընութեան ընդհանուր ուրախութիւնը հաճելի չէ քո սրտին։ Այն ժամանակ երիտասարդ հովիւը գետի ափին քշում էր հօտը, իւր սրինգն ածելով։ Եղիսաբէթը նորա վերայ ուղղեց իւր հայեացքը եւ մտածեց.—«Եթէ այժմ նա, որով զբաղուած է իմ միտքը՝ ծնուէր իբրեւ մի գիւղացի հովիւ եւ եթէ այժմ նա քշէր իւր հօտը իմ մօտից, Ա՜խ, ես ժպտալով կ՝ ողջունէի նորան եւ

կասէի քաղցրաժպիտ. «Բարեւ, սիրելի հոլիւ, ուր ես քշում դու քո հօտը։ Այստեղ բանուումեն կանաչ խոտերը քո ոչխարների համար եւ այստեղ բացւում են կարմիր ծաղիկները, որոնցից կարելի է հիւսել քո գլխարկի համար պսակ...». Նա կը նայէր ինձ քաղցր՝ հայեացքով եւ շատ կարելի է ըրռնէր իմ ձեռքը... Ցնորքնե՛ր... Հոլիւը ածելով իւր սրինգը, հասաւ նորա մօտ եւ իւր խայտաճամուկ հօտով ծածկուեցաւ մօտակայ ըլրակի յետեւ։

Յանկարծ Եղիսաբէթը թիւակների աղմուկ լսեց, նայեց գետը եւ տեսաւ մի նաւակ, իսկ նաւակի մէջ Էրասմին։

Նորա բոլոր երակները սկսան բաբախել եւ. իհարկէ ոչ երկիւղից։ Նա վերկացաւ, կամեցաւ գնալ, բայց չը կարողացաւ Էրասմը դուրս եկաւ ափը, մօտեցաւ Եղիսաբէթին եւ մասամբ նորա ցնորքները կատարուեցան, որովհետեւ նա նայեց Եղիսաբէթին քաղցր հայեացքով, բռնեց նորա

ձեռքը... Աւա՜ղ Եղիսաբէթ... Եղիսաբէթը կանգնած էր խոնարհ հայեացքով, բոցերի նման կարմրած այտերով, տատանեալ սրտով.—չը կարողացաւ յետ առնել նորանից ձեռքը, չը կարողացաւ դարձնել իւր երեսը, երբ նա մօտեցաւ Եղիսաբէթին իւր վարդագոյն շրթունքներով... Ա՜խ, Էրասմը համբուրեց նորան, համբուրեց այնպիսի ջերմագին, որ ամբողջ տիեզերքը նորան երեւեցաւ այրուող կրակի մէջ։

—Սիրելի՜ Եղիսաբէթ, ասաց Էրասմը, չքնաղ Եղիսաբէթ, ես սիրումեմ քեզ։ Եւ այս խօսքերը դուրս էին բղխում նորա հոգու խորքերից, որպէս երկնային զմայլեցնող երաժշտութիւն. նա հազիւ հազ համարձակուեցաւ հաւատալ իւր ականջներին եւ... բայց ես վայր եմ ձգում իմ վրձինս։ Կասեմ միայն, որ այս վայրկեանում հրաճռանքը աներեւութացրեց Եղիսաբէթի երկիւղը, Էրասմը իմացաւ, որ ինքը սիրւումէ, նորա անարատ, մաքուր եւ անկեղծ սրտով։

Նոքա նստեցին խոտերի վերայ, ոչ հեռու իրարուց եւ նայում էին միմեանց աչքերի մէջ, ու իրար ասում. «Սիրի՛ր ինձ». երկու ժամը նոցա երեւեցաւ իբեւ երկու ակնթարթ։ Վերջապէս Եղիսաբէթը յիշեց, որ իւր մայրը կարող է անանգիստ լինել, պէտքէ գնալ։

—Ա՜խ, Էրաստ, ասաց նա, միշտ, սրդեօք, դու ինձ կը սիրե՞ս

—Միշտ եւ հանապազ, սիրելի Եղիսաբէթ, պատասխանեց նա։

—Եւ այդ բանի համար դու կարո՞ղ ես երդուել։

—Կարողեմ, սիրելի՛ Եղիսաբէթ, կարողեմ։

—Ո՛չ, ինձ հարկաւոր չէ երդումը։ Ես հաւատումեմ քեզ, Է՛րաստ, հաւատումեմ։ Մի՞թէ դու թշուառ Եղիսաբէթին կը խաբես,—այդ անկարելի է։

—Անկարելի է, անկարելի, սիրելի Եղիսաբէթ։

—Ի՞նչպէս ես բախտաւոր եմ եւ ի՞նչպէս կ՝ուրախանայ մայրիկս, երբ կ՝ իմանայ,

որ դու ինձ սիրում ես։

—Ա՜խ, ոչ, Եղիսաբէթ, նորան չը պէտք է ոչինչ ասել։

—Ինչու.

—Հին մարդիկը կասկածաւոր են։ Նա կ՚երեւակայէ մի որ եւ է վատ բան։

—Չի կարող այդպէս պատահել։

—Բայց եւ այնպէս՝ խնդրում եմ քեզ սորա մասին նորան ոչ մի խօսք չ՚ասել։

—Լաւ, պէտք է քեզ լսել, չը նայելով որ ես չէի կամենայ ոչինչ թագցնել նորանից։ Նոքա գրկախառնուեցան, համբուրուեցան վերջին անգամ եւ խոստացան ամեն երեկոյ տեսնուիլ միմեանց հետ, կամ գետի ափին, կամ թղտենիների անտառում, կամ որ եւ է տեղ Եղիսաբէթի խրճթի մօտ. միայն անպատճառ տեսնուիլ։ Եղիսաբէթը գնաց, սակայն նորա աչքերը հարիւր անգամ դարձան դէպի Էրաատը, որը կրկին կանգնած էր գետի ափին եւ նայում էր իւր յետեւից։

Եղիսաբէթը հասաւ իրանց խրճիթը ոչ այն տրամադրութեամբ, ինչ տրամադրութեան տակ այն տեղից դուրս էր գնացել։ Դէմքի եւ նորա բոլոր անդամների շարժողութեանց մէջ երեւում էր ներքին ուրախութիւն։ «Նա ինձ սիրում է», մտածում էր նա եւ հրճւում էր այդ մտքով։—«Ա՜խ, մայրիկ», ասաց Եղիսաբէթը իւր մօրը, որը հազիւ թէ արթնացաւ։ «Ա՜խ, մայրիկ, ինչ գեղեցիկ առաւօտ է, ինչպէս ամեն ինչ ուրախ են դաշտում.— ոչ մի ժամանակ արտուտները այդպէս գեղեցիկ չեն երգել, ոչ մի ժամանակ արեգակը այդպէս լուսաւոր չի փայլել, ոչ մի ժամանակ ծաղիկները այդպէս ախորժելի կերպով չեն բուրել»։ Պառաւը յենուելով կռնափայտի վերայ, դուրս եկաւ մարգագետինը՝ որպէս զի դուրճանար այն առաւօտով, որ Եղիսաբէթը այնպէս հրաշալի գոյներով նկարագրեց։ Առաւօտը ինքն ըստ ինքեան երեւեցաւ նորան ախորժելի. սիրելի աղջկայ ուրախութեան հետ ուրախ երեւաց նորան եւ ողջ բնութիւնը։

—Ա՜խ, Եղիսաբէթ, ասում էր նա, ինչպէս Աստուած ամեն բան լաւ է ստեղծել։ Վաթսուն տարի ապրումեմ երկրիս վերայ, բայց կրկին չեմ կարողանում դիտել Աստծոյ ստեղծած բոլոր հրաշալիքները, չեմ կարողանում դիտել մաքուր երկնակամարը, որ նման է ահագին վրանին եւ այն հողին, որ ծածկւում է ամեն տարի նոր խոտով եւ նոր ծաղիկներով։ Երկնային թագաւորը շատ է սիրել մարդուն, որ այսպէս լաւ զարդարել է այս աշխարհը։ Ա՜խ, Եղիսաբէթ, ո՞վ կը ցանկանար մեռնել, եթէ մեզ երբեմն մի որ եւ է ցաւ չը լինէր... Երեւումէ այդպէս պէտքէ լինի։ Շատ կարելի է մենք մոռանայինք մեր հոգիները, եթէ ոչ մի անգամ արցունք չը հոսէր մեր աչքերից։ Իսկ Եղիսաբէթը մտածում էր. «Ա՜խ, ես աւելի շուտ կը մոռանամ իմ հոգին, քան թէ իմ սիրելի Էրաստիս։»

Սորանից յետոյ Էրաստը եւ Եղիսաբէթը, վախենալով ուխտադրուժ գտնուելուց,

ամեն երեկոյ տեսնում էին (երբոր Եղիսաբէթի մայրը պարկում էր քնելու), կամ գետի ափին, կամ թղտենիների անտառում. իսկ ամենից յաճախ տեսնում էին հարիւրամեայ կաղնիների ստուերների տակ (խրճիթից ութոռն սաժէն հեռու)—կաղնիները, որոնք հովանաւորում էին իսոր եւ մաքուր լիճը, որ փորուած էր շատ հնուց։ Այնտեղ յաճախ հանդարտ լուսնեակը, կանաչ ճիւղերի միջից, իւր արծաթափայլ ճառագայթներով փայլեցնում էր Եղիսաբէթի փայլուն մազերը, որոնք խաղում էին զեփիւռից եւ սիրելի ընկերոջ ձեռքը։ Յաճախ եւ ճառագայթները լուսաւորում էին քնքոյշ Եղիսաբէթի աչքերի մէջ գտնուած սիրոյ փայլուն արցունքները, որոնք միշտ չորանում էին էրաստի համբոյրներով։ Նոքա գլուեցան առանց մոռանալու ամօթխածութիւնը, սուրբ, անարատ էր նոցա գրկախառնութիւնը։

—Երբ դու, ասում էր Եղիսաբէթը էրաստին, երբ դու կասես ինձ, ես սիրում

եմ քեզ, իմ ընկերուհիս, երբ կը սեղմես ինձ քո կրծքին եւ կը նայես ինձ վերայ քո սրտառուչ աչքերով.—Ա՜խ, այն ժամանակ այնպէս լաւ կը լինի ինձ համար, այնպէ՜ս, որ ես ինքս ինձ կը մոռանամ, կը մոռանամ բոլորը, բացի Էրաստից, զարմանալի է, զարմանալի, սիրելիս, որ ես քեզ դեռ չը ճանաչած կարողանում էի հանդարտ եւ ուրախ ապրել։ Այժմ ինձ այդ անհասկանալի է, միմիայն այսքան գիտեմ, որ առանց քեզ ապրելը ապրել չէ, այլ տրխրութիւն եւ ձանձրոյթ։ Առանց քո աչքերի՝ փայլուն լուսնեակը խաւար է, առանց քո ձայնի՝ երգող սոխակը տխուր է, առանց քո շնչառութեան՝ հողմը ինձ համար անախորժ է։

Էրաստը ոգեւորուեցաւ իւր հուսահիով, այսպէս էր կոչում նա Եղիսաբէթին, եւ տեսնելով թէ ինչքան Եղիսաբէթը սիրում է նորան, ինքն իրեն աւելի սիրելի էր թւում։ Աշխարհիս բոլոր փայլուն զուարճութիւնները նորան թւում էին աննշան՝

համեմատած այն բաւականութիւնների հետ, որոնցով անմեղ հոգու տարիքաւոր բարեկամութիւնը մնունդ էր տալիս նորա սրտին։ Զգուանքով նա մտաբերում էր այն նախատելի հեշտասիրութիւնը, որով նորա զգացմունքները առաջ կերակրւում էին։ «Ես պէտք է ապրեմ Եղիսաբէթի հետ, որպէս եղբայրը քրոջ հետ, մտածում էր նա այդ սիրոյ մէջ բոլորովին ոչ մի չար բան չը գործածելով, ու միշտ, երջանիկ կը լինեմ»։ Անխոհեմ երիտասարդ, ճանաչումես արդեօք քո սիրտը։ Միշտ կարողես արդեօք պատասխան տալ քո շաժմունքներիդ համար, արդեօք մտածմունքդ միշտ թագաւորումէ՞ քո զգացմունքներին։

Եղիսաբէթը պահանջում էր, որ Էրասմը շուտ շուտ այցելէր իւր մօրը։ «Ես սիրումեմ նորան, ասում էր նա, եւ բաւական եմ ցանկանում նորա համար, իսկ ինձ թւում է որ քեզ տեսնելը մեծ բարեբախտութիւն է բոլորի համար»։—Պառաւը միշտ ուրախանում էր նորան տեսնելիս։ Նա սիրում էր

նորա հետ խօսալ իւր հանգուցեալ ամուսնու մասին եւ պատմել նորան իւր երիտասարդութեան օրերը. նորա մասին, թէ ինչպէս նա առաջին անգամ պատահեցաւ իւր սիրելի Յովհաննէսին, թէ ինչպէս սիրեց նորան, ինչպէս սիրով եւ համաձայնութեամբ ապրում էր նորա հետ։ «Ա՜խ, մենք չէինք կարողանում միմեանց նայելով կշտանալ, մինչեւ դաժան մահը կտրեց նորա կեանքի թելը։ Նա մեռաւ իմ ձեռքերիս վերայ»։ Էրաատը լսում էր նորան անկեծ հրճուանքով։ Նա նորանից գնում էր Եղիսաբէթի ձեռագործը եւ կամենում էր միշտ տանապատիկ թանգ վճարել նորա նշանակած գնից, բայց պառաւը ոչ մի անգամ չէր վերցնում աւելորդ։

Այսպէս անցաւ մի քանի շաբաթ։ Մի անգամ երեկոյեան Էրաատը շատ երկար պատեց իւր Եղիսաբէթին։ Վերջապէս նա եկաւ, բայց այնպէս տխուր, որ Էրաատը վախեցաւ, նորա աչքերը արցունքից կարմրել էին։

—Եղիսաբէթ, Եղիսաբէթ, ի՞նչ է պատահել քեզ։

—Ա՜խ, Էրաստ ես լաց եմ եղել.

—Ինչո՞ւ, ի՞նչի համար.

—Ես պէտք է ասեմ քեզ բոլորը։ Ինձ համար յայտնուել է մի ամուսին, հարեւան հարուստ գիւղացու որդին է, մայրիկս կամենում է, որ ես նորան ուզեմ։

—Եւ դու համաձայնումե՞ս։

—Անգո՜ւթ, միթէ՞ կարելի է դորա մասին հարցնել։ Այո, ես խղճուամեմ մայրիկիս, նա լալիս է եւ ասում, թէ ես չեմ ուզում նորա հանգստութիւնը, որ նա մահուան ժամանակ կը չարչարուի, եթէ ինձ համար չը կարողանայ մի ամուսին գտնել։ Ա՜խ, մայրիկս չը գիտէ, որ ես քեզպէս սիրելի ընկեր ունեմ։

Էրաստը համբուրեց Եղիսաբէթին, ասաց, թէ իւր համար աշխարհիս վերայ ամեն բանից թանգ արժէ նորա բախտաւորութիւնը, թէ նորա մօր մահուանից յետոյ նա կը վերցնի Եղիսաբէթին իւր մօտ եւ

անբաժան կապրի նորա հետ, գիւղումը, խիտ անտառներում՝ որպէս դրախտի մէջ։

—Սակայն դու չես կարող իմ ամուսին լինել, ասաց Եղիսաբէթը, հանդարտ հառաչելով։

—Ինչո՞ւ համար չեմ կարող.

—Որովհետեւ ես գեղջկուհի եմ։

—Դու անպատուում ես ինձ, Եղիսաբէթ։ Քո բարեկամի համար ամենա կարեւորն է հոգին՝ զգայուն եւ անմեղ հոգին եւ Եղիսաբէթը կը լինի միշտ ամենից մօտ իմ սրտին։

Եղիսաբէթը ընկաւ նորա գիրկը՝ արդէն հասել էր այն վայրկեանը, երբ օրիորդի անարատութիւնը, պէտք է չքանար։ Էրատը զգում էր մի անսովոր յուզմունք իւր արեան մէջ. երբէք Եղիսաբէթը նորան այնքան գեղեցիկ չէր թուել, երբէք նորա փաղաքշանքը չէին յուզել նորան այնպէս սաստիկ, երբէք նորա համբոյրները չէին եղել այնպէս բոցավառ՝ Եղիսաբէթը ոչինչ չէր գիտում, ոչինչ չէր կասկածում, ոչնչից չէր վախենում՝ երեկոյեան

խաւարը աւելի յագեցնում էր ցանկութեանը։ Ո՛չ մի աստղ չէր փայլում երկնակամարի վերայ, ո՛չ մի ճառագայթ չէր կարողանում լուսաւորել մոլորութիւնը։ Էրասատը իւր մէջ սարսափ էր զգում։ Նոյնպէս եւ Եղիսաբէթը, չը գիտենալով ինչից, չը գիտենալով թէ՝ ինչ է պատահում իրան... Ա՜խ, Եղիսաբէթ, Եղիսաբէթ, ո՞րտեղ է քո պահապան հրեշտակը, ո՞րտեղ է քո անմեղութիւնը...։

Այդ մոլորութիւնը մի րոպէից յետոյ անցաւ։ Եղիսաբէթը չէր հասկանում իւր զգացմունքը, զարմանում էր նա եւ հարցնում։ Էրասատը լուռ էր՝ խօսքեր էր փընտռում եւ չէր կարողանում գտնել։

—Ա՜խ, ես երկնչում եմ, ասաց Եղիսաբէթը, վախենում եմ նորանից, ինչ որ այժմ պատահեցաւ մեզ հետ, ինձ թւում է, կարծես թէ մեռնումեմ, որ իմ հոգին... Ո՛չ, չեմ կարող այդ ասել։ Դու լռում ես Էրասատ, հառաչում ես... Տէր իմ Աստուած, ինչ բան է այս...։ Այդ միջոցին

փայլեց կայծակը եւ թնդաց որոտը։ Եղիսաբէթը բոլորովին դողում էր։

—Էրաստ, Էրաստ, ասում էր նա, զարհուրելի է, ես երկնչում եմ, որ կայծակը սպանի ինձ, որպէս մեղաւորի։

Խստութեամբ աղմկում էր փոթորիկը, սեւ ամպերից անձրեւ էր թափւում, կարծես թէ բնութիւնը տրտնջում էր Եղիսաբէթի ողջախոհութեան կորստի համար։ Էրաստը աշխատում էր հանդարտեցնել Եղիսաբէթին, ուստի ուղեկցեց նորան մինչեւ խրճիթը։ Արցունքները գլորւում էին նորա աչքերից, երբ Էրաստը արդէն պատրաստւում էր հեռանալ։

—Ա՜խ, Էրաստ, հաւատացրու ինձ, որ մենք առաջուայ պէս բախտաւոր կը լինենք։

—Կը լինենք, Եղիսաբէթ, կը լինենք. պատասխանեց նա։

—Տա՛յ Աստուած։ Ես չեմ կարող չը հաւատալ քո խօսքերին, իմացիր որ ես քեզ սիրումեմ, միայն իմ սրտիս մէջ...։ Բա՛յց

բաւական է, ցտեսութիւն, վաղը կը տեսնուենք։

Նոցա տեսակցութիւնները շարունակւում էին, բայց ի՞նչպէս բոլորը փոխուեցաւ։ Էրասմը չէր կարողանում բաւականանալ միայն իւր Եղիսաբէթի անմեղ փաղաքշանքներով, միայն նորա սիրելի հայեացքով, միայն նորա ձեռքերի շփմամբը, միայն համբոյրներով, միայն անարատ գլուխախառնութիւններով։ Նա կամենում էր աւելի, աւելի եւ վերջապէս ոչինչ չէր կարողանում կամենալ. բայց ով որ ճանաչում է իւր սիրտը, ով որ մտածել է նորա ամենաքնքոյշ բաւականութիւնների յատկութիւնների մասին, նա իհարկ է կը համաձայնի ինձ հետ, որ բոլոր ցանկութեանց կատարումը, սիրոյ ամենալոանգաւոր փորձանքն է։

Եղիսաբէթը Էրասմի համար այն անարատութեան հրեշտակը չէր այլ եւս, որ բորբոքում էր առաջ նորա երեւակայութիւնը եւ զմայլեցնում էը հոգին։ Պղատոնական

սէրը տեղի տուաւ այնպիսի զգացմանց, որոնցով նա չէր կարող հպարտանալ եւ որոնք նորա համար նոր չէին. ինչ վերաբերում էր Եղիսաբէթին, նա լիովին անձնատուր լինելով նորան, նրանով էր միայն ապրում եւ շնչում, ամեն բանի մէջ հնազանդում էր նորա կամքին ինչպէս գառը, եւ նորա բաւականութեան մէջ ենթադրում էր իւր երջանկութիւնը։ Նա տեսնում էր Էրաստի մէջ փոփոխութիւն եւ յաճախ ասում էր նորան։

—Առաջ դու աւելի ուրախ էիր լինում, առաջ մենք աւելի խաղաղ էինք եւ բախտաւոր, առաջ այնքան չէի վախենում կորցնել քո սէրը։

Երբեմն «Հոտ Բաշխ» ժամանակ Էրաստը ասում էր նորան. «Վաղը չեմ կարող քեզ հետ տեսնուիլ, Եղիսաբէթ, ինձ մի հարկաւոր գործ պատահեց»։ Եւ միշտ այսպիսի խօսքեր ասելու ժամանակ Եղիսաբէթը հառաչում էր։

Վերջապէս հինգ օր շարունակ Եղիսաբէթը չը տեսաւ Էրաստին, ուստի սաստիկ անհանգիստ էր։ Վեցերորդ օրը Էրաստը եկաւ տխուր դէմքով եւ ասաց Նորան.

—Սիրելի Եղիսաբէթ, ես պէտք է մի որոշեալ ժամանակով քեզանից բաժանուեմ։ Դու գիտես, որ մենք պատերազմ ունենք, ես էլ ծառայութեան մէջն եմ. զօրագունդս գնում է պատերազմ։ Եղիսաբէթի գոյնը թռաւ՝ քիչ էր մնում ընկնէր ուշաթափ։

Էրաստը փաղաքշեց Նորան, ասաց, որ նա միշտ կը սիրէ իւր անգին Եղիսաբէթին եւ միշտ կարող է յուսալ որ իւր վերադառնալուց յետոյ երբէք Նորանից չի բաժանուիլ։ Եղիսաբէթը երկար ժամանակ լուռ մնաց, յետոյ թափելով աչքերից դաւն արցունքի կաթիլները, բռնեց Նորա ձեռքը եւ նայելով Նորան սիրոյ քնքշութեամբ, հարցրեց.

—Չե՞ս կարող արդեօք այստեղ մնալ։

—Կարող եմ, պատասխանեց նա, բայց այն ժամանակ կը մնամ բոլորովին անպատիւ։ Ամենքն ինձ կ՚արհամարհեն, ամենքը կը զզուեն ինձանից, իբրեւ վախկոտ եւ հայրենեաց անարժան որդուց։

—Ա՜խ, եթէ այդպէս է, ուրեմն գնա՛, ուր Աստուած հրամայում է քեզ, ասաց Եղիսաբէթը, բայց քեզ կարող են այնտեղ սպանել։

—Մահը հայրենիքի համար՝ երկիւղալի չէ, սիրելի Եղիսաբէթ։

—Ես կը մեռնեմ, եթէ գուս աշխարհիս վերայ այլ եւս չես լինի։

—Բայց ինչո՞ւ ես այդպէս մտածում։ Ես յուսով եմ կենդանի մնալ, յուսով եմ վերադառնալ քեզ մօտ՝ իմ սիրելի ընկերուհուս մօտ։

—Տա՛յ Աստուած, տայ Աստուած։ Ամենայն օր, ամենայն ժամ այդ բանի համար կ՚աղօթեմ։ Ա՜խ, ինչու համար չը դիտեմ ո՛չ գրել, ո՛չ կարդալ։ Դու կը յայտնէիր ինձ այն բոլորը, ինչ որ քեզ հետ կը պատահէր, իսկ ես կը գրէի քեզ իմ արցունք-

ների մասին։

—Ո՛չ, ինչպէ՞ս քեզ, Եղիսաբէթ, ինչպէ՞ս քեզ քո ընկերոջդ համար։ Ես չեմ կամենում, որ դու առանց ինձ լաց լինես։

—Անգութ մարդ, դու կամենումես գրկել ինձ եւ այդ ուրախութիւնից։ Ո՛չ, քեզանից հեռանալուց յետոյ՝ միմիայն այն ժամանակ կը դադարեմ լաց լինելուց, երբ կը չորանայ իմ սիրտը։

—Մտածի՛ր այն ախորժելի վայրկեանի մասին երբ մենք կրկին կը տեսնուենք։

—Կը մտածեմ, անշուշտ կը մտածեմ նորա մասին։ Ա՜խ, եթէ այն վայրկեանը աւելի շուտ հասնէր։ Սիրելի, անգին Էրաստո, յիշի՛ր, յիշի՛ր քո թշուառ Եղիսաբէթիդ, որը քեզ իրանից առաւել է սիրում։

Սակայն ես չեմ կարող նկարագրել այն բոլորը, որ նոքա այդ ժամին խօսեցին։ Միւս օրը նշանակեցին վերջնական տեսակցութեան ժամը։

Էրաստը ցանկացաւ մնաս բարեւ

ասել, Եղիսաբէթի մօրը՝ որը լսելով թէ փողջը և գէղէցիկ պարոնը պատերազմ պէտք է գնայ. չը կարողացաւ զսպել իւր արցունքը։ Էրատը հարկադրեց նորան վեցնել իրանից մի քիչ փող, ասելով.

—Ես չեմ ուզում, որ Եղիսաբէթը իմ բացակայութեան ժամանակ ծախէր իւր ձեռագործները, որոնք ըստ պայմանի ինձ են պատկանում։ Պառաւը օրհնեց նորան՝ ասելով.

—Տա՛յ Աստուած, որ դու անխնա վերադառնաս մեզ մօտ, որ կրկին կարողանամ քեզ տեսնել այս կեանքում։ Գուցէ Եղիսաբէթը մինչեւ այն ժամանակ իրան յարմար ամուսնացու գտնէր։ Ինչպէս ես շնորհակալութիւն կը յայտնէի Աստծուն, եթէ դու այն ժամանակ գայիր մեր հարսանիքը։ Իմացիր, պարոն, որ երբ Եղիսաբէթը երեխաներ կունենայ՝ դու պէտք է նոցա կնքես։ Ա՜խ, ես շատ կը ցանկանայի մինչ այն ժամանակն ապրել։

Եղիսաբէթը կանգնած մօր մօտ չէր

համարձակւում նայել նորան։ Ընթերցողը շատ հեշտութեամբ կարող է երեւակայել թէ արդեօք նա այդ րոպէին ինչ էր զգում։

Բայց ինչէր զգում նա այն ժամին, երբ Էրաստը, վերջին անգամ գրկելով, վերջին անգամ սեղմելով նորան իւր կրծքին, ասաց. «Ներիր, Եղիսաբէթ...»։ Ի՞նչ հրաշալի եւ սրտառուչ տեսարան էր։ Առաւօտեան արշալոյսը կրակի բոցերի նման շրջապատեց արեւելեան ամպերին, Էրաստը կանգնած էր վիթխարի կաղնու ճիւղերի տակ՝ գրկած ունենալով իւր գունդթափ, թոյլ, վշտահար ընկերուհուն, որ հրաժարական ողջոյն տալով նորան, հրաժարւում էր իւր հոգուցը։ Ամբողջ բնութիւնը գտանւում էր լռութեան եւ խաղաղ անդորրութեան մէջ։

Եղիսաբէթը ողբում էր, իսկ Էրաստը լաց էր լինում. Էրաստը թողեց նորան, նա վայր ընկաւ ծնկների վերայ, բարձրացրեց

իւր ձեռքերը դէպի երկինք եւ սկսաւ նայել Էրաստի յետեւից, որ հետզհետէ հեռանում էր՝ հեռու, հեռու եւ վերջապէս ծածկուեցաւ։ Փայլում էր արեգակը, իսկ թշուառ Եղիսաբէթը մնացել էր զգացմունքից եւ յիշողութիւնից զրկուած։

Նա ուշքի գալով՝ լոյսն անգամ նորան տխուր եւ վհատեալ երեւեցաւ։ Բնութեան բոլոր գուարճութիւնները փակուել էին նորա համար, իւր սրտի սիրելիի հետ։ «Ա՜խ, մտածում էր նա, ինչո՞ւ համար ես մնացի այս անապատի մէջ։ Ո՞վ կարող է ինձ արգելել եթէ թռչեմ իմ սիրելի Էրաստի յետեւից։ Պատերազմը ինձ համար երկիւղալի չէ, երկիւղալի է միայն այնտեղը՝ որտեղ չը կայ իմ ընկերը։ Կամենում եմ նորա հետ ապրել, նորա հետ մեռնել։ Կամ մահուամբս փրկել նորա թանգագին կեանքը»։—«Սպասէր, սպասէր, սիրելիս, ես թռչում եմ քո յետեւից»։ Այս ասելով, արդէն կամենում էր նա վազել Էրաստի յետեւից, բայց «ես մայր ունեմ» միտքը։

կանգնեցրեց նորան։ Եղիսաբէթը հառաչեց եւ խոնարհեցնելով իւր գլուխը, ծանր քայլերով ուղեւորուեցաւ դէպի իւր խրճիթը։ Այս ժամից սկսած նորա համար բոլոր օրերը տխրութեան եւ ցաւի օրեր էին, սակայն նա ստիպուած էր այս բոլորը ծածկել իւր քընքոյշ մօրից, որով աւելի չարչարւում էր նորա սիրտը։ Միմիայն այդ սիրտը փափակում էր այն ժամանակ, երբ Եղիսաբէթը առանձնանալով խիտ անտառի խորքում, կարողանում էր ազատ կերպով թափել իւր արցունքը եւ հառաչել իւր սիրելիի բաժանման պատճառաւ։ Տխուր տատրակը յաճախ միացնում էր իւր գանգատաւոր ձայնը, նորա հառաչանքների հետ։ Բայց երբեմն, չը նայելով որ շատ հազիւ, յուսոյ ոսկեգոյն ճառագայթը՝ մխիթարութեան ճառագայթը, լուսաւորում էր նորա մռայլ վիշտը։— «Երբ նա կը վերադառնայ ինձ մօտ, ինչպէս բախտաւոր կը լինեմ։ Ինչպէս բոլորը կը փոխուի...»։ Այս մտքից նորա հայեացքը փայլում էր, այտերը վարդի գոյն էին ստանում եւ Եղիսաբէթը ժպտում էր որ-

ալէս մայիսի առաւօտ, փոթորկալի գիշե-
րից յետոյ։ Այսպիսով անցաւ մօտ երկու
տարի։

Մի օր Եղիսաբէթը պէտքէ Մոսկուա
գնար, վարդաջուր առնելու համար,
որով դարմանում էր իւր մօր աչքերը։
Մեծ փողոցներից մինում, նորան պա-
տահեց մի շքեղ կառք եւ այս կառքի
մէջ նա տեսաւ Էրաստին։ «Ա՜խ», աղա-
ղակեց Եղիսաբէթը եւ վազեց դէպի նա,
բայց կառքը մօտիկից անցնելով, դարձաւ եւ
կանգ առաւ մի դրան առջեւ։ Էրաստը
դուրս եկաւ կառքից եւ կամենում էր արդէն
բարձրանալ մի մեծաշուք տան աստիճան-
քի վերայ, երբ յանկարծ իրան զգաց Եղի-
սաբէթի գրկումը։ Էրաստի գոյնը թռաւ, ապա
ոչ մի խօսք չը պատասխանելով նորա բա-
ցականչութեանը, բռնեց նորա ձեռքից, ա-
դրաւ իւր առանձնասենեակը, փակեց դու-
ռը եւ ասաց Եղիսաբէթին.

—Եղիսաբէթ, հանգամանքները փո-
խուել են, ես ամուսնացած եմ, դու

պէտք է թողնես ինձ հանգիստ եւ քո սեպհական հանգարտութեանդ համար մոռանաս ինձ։ Ես սիրում էի քեզ, եւ այժմն էլ սիրումեմ, այսինքն կամենումեմ քո բարութիւնը։ Ահա հարիւր ռուբլի՝ վերցրու (նա դրաւ փողը նորա գրպանի մէջ), թող տուր ինձ վերջին անգամ համբուրել քեզ եւ գնա՛ տուն։

Մինչդեռ Եղիսաբէթը կը կարողանար հաւաքել իւր ուշքը, Էրաստը դուրս բերեց նորան առանձնասենեակից եւ ասաց ծառային. «Այս օրիորդին անցկացրու բակի կողմից»։

Սիրտս լցւում է այս բոպէին արիւնով։ Ես ուրանումեմ Էրաստի մէջ մարդկութեան նշոյլը, պատրաստեմ նորան նզովելու, սակայն լեզուս չի շարժւում։ Նայումեմ երկնքին, եւ արցունքները գլորւում են դէմքիս վերայ։ Ա՜խ, ինչո՞ւ համար եմ գրում այս տխուր իրողութիւն, եւ ոչ թէ վիպասանութիւն։

Այսպիսով ահա, Էրաստը խաբեց Եղիսաբէթին, ասելով թէ պատերազմ է գնում զօրքի հետ։ Ո՛չ, նա իսկապէս եղել էր զօրքի հետ պատերազմում, սակայն փոխանակ մարտնչելու թշնամեաց դէմ, թուղթ էր խաղում եւ այդպիսով տանուլ է տալիս գրեթէ բոլոր իւր կարողութիւնը՝ իւր ունեցած չունեցածը։ Նուտով դաշն կապուեցաւ եւ Էրաստը վերադարձաւ Մոսկուա՝ բեռնաւորուած ահագին պարտքերով։ Նորան միմիայն մնում էր մի միջոց. իւր հանքամանքները ուղղելու համար, այն է՝ ամուսնանալ այն չափահաս ու հարուստ այրիի հետ, որ վաղուց սիրահարուած էր Էրաստի վերայ։ Այդ բանը նա վճռելով, տեղափոխուեց այրիի տունը, տալով իւր Եղիսաբէթին հառաչանք։ Բայց այդ ամենը կարո՞ղ են արդեօք նորան արդարացնել։

Եղիսաբէթը ուշքի եկաւ փողոցումը եւ այնպիսի դրութեան մէջ, որ չի կարող նկարագրել ոչ մի գրիչ։—«Նա ար-

տաքսեց ինձ։ Նա միթէ սիրում է ուրիշին։ Ես կորած եմ»։ Ահաւասիկ նորա մտքերն եւ նորա զգացմունքը։

Անգութ ուշաթափութիւնը մի առ ժամանակ ընդմիջեց այդ մտքերը։ Մի բարի կին, որ այդ փողոցով անց էր կենում, Եղիսաբէթի մօտ կանգ առաւ, որը ձգուած էր գետնի վերայ, եւ աշխատեց ուշքի բերել նորան։ Թշուառը բաց առաւ աչքերը՝ կանգնեց այս բարի կնոջ օգնութեամբ, շնորհակալութիւն յայտնեց նորան եւ շարունակեց իւր ճանապարհը, ինքն էլ չիմանալով թէ ուր է գնում։

—Ես ապրել չեմ կարող, մտածում էր Եղիսաբէթը, ո՛չ, չի՛ կարելի ապրել... Օ՜, եթէ երկինքը փուլ գար ինձ վերայ, եթէ երկիրը կլանէր թշուառի՛ս... Ո՛չ, երկինքը չի ընկնում ցած, երկիրը չի շարժւում, վա՛յ ինձ...։

Նա դուրս եկաւ քաղաքից եւ յանկարծ իրան տեսաւ մի խոր լճի ափին՝

հին կաղնիների սառուերների տակ, որոնք մի քանի շաբաթ առաջ անխօս վկաներ էին նորա հրճուանքների։ Այս յիշողութիւնը յուզեց նորա հոգին՝ սրտի երկիւղալի չարչարանքը ձեւակերպուեցաւ նորա դէմքի վերայ։ Բայց մի քանի րոպէից յետոյ ընկղմուեցաւ նա մտածութեան մէջ, յետոյ նայեց իւր շուրջը եւ տեսաւ իւր հարեւանի դաստերը՝ տանուհինգ ամեայ օրիորդին, որը գնում էր այդ ճանապարհով, աղաղակեց նորա յետեւից, հանեց իւր գլխանից տասը հատ ոսկի եւ տալով նորան, ասաց.—«Սիրելի, Աննա, սիրելի ընկերուհի, տա՛ր այս փողերը եւ մայրիկիս տուր, տոքա գողացած չեն, ասա՛ նորան, որ Եղիսաբէթը նորա առաջ մեղաւոր է, որ ես թագցրել եմ նորանից իմ սէրը մի անգութ մարդու համար, է... ի համար։ Ի՞նչ հարկաւոր է իմանալ նորա անունը։ Ասա՛, որ այդ մարդը դաւաճանել է ինձ, ինդրիր, որպէս զի մայրիկս ներէ ինձ, Աստուած նորա օգնականը կը լինի, համբուրիր նորա ձեռքն այնպէս, ինչպէս

այժմ ես համբուրում եմ քո ձեռքը, սա՛, որ թշուառ Եղիսաբէթը հրամայեց համբուրել, սա՛, որ ես...»։

Այստեղ Եղիսաբէթը իրեն ձգեց ջուրը։ Անման աղաղակեց, լաց եղաւ, սակայն չը կարողացաւ նորան փրկել։ Վազեց գիւղը, հաւաքուեցան մարդիկ եւ Եղիսաբէթին դուրս հանեցին ջրից. բայց նա արդէն մեռած էր։

Այս կերպով, վերջացրեց իւր կեանքը՝ հոգուով եւ մարմնով գեղեցիկ Եղիսաբէթը։ Երբ մենք այնտեղ, նոր կեանքումը, կը տեսնուենք, ես կը ճանաչեմ քեզ, քնքո՛յշ Եղիսաբէթ։

Նորան թաղեցին լճի մօտ եղած մեայլ կաղնու տակ եւ կանգնացրին նորա գերեզմանի վերայ փայտէ խաչ։ Այստեղ յաճախ մտածմանց մէջ ընկղմուած. նստում եմ լուռ, յենուելով Եղիսաբէթի աճիւնի դամբարանի վերայ։ Աչքիս առջեւ լիճն է

ծածանում, գլխիս վերեւ խաղում են տերեւները։

Եղիսաբէթի մայրը լսելով իւր դստեր զարհուրելի վախճանը, երկիւղից նորա արիւնը սառեց եւ աչքերը յաւիտեան փակուեցան։ Խրճիթը ամայացաւ։ Նորանում փչում է քամին եւ նախապաշարեալ շինականները, լսելով գիշեր ժամանակ այդ աղմուկը՝ ասում են. «Այնտեղ հառաչում է մեռելը, այնտեղ հառաչում է թշուառ Եղիսաբէթը»։

Էրասմը մինչեւ իւր կենաց վերջը անբախտ էր։ Լսելով Եղիսաբէթի թշուառ վախճանը, նա չը կարողացաւ մխիթարուիլ եւ իրան մեղաւոր էր համարում։

Նա ծանօթացայ նորա հետ իւր մահուանից մի տարի առաջ։ Նա ինքը պատմեց այս պատմութիւնը եւ տարաւ ինձ Եղիսաբէթի գերեզմանի մօտ։ Միայն, այժմ գուցէ նոքա արդէն հաշտուել են։

Վաճառւում է Կենդրոնական եւ Կովկասեան գրավաճառանոցներում

գինն է 10 կոպ.

Օտար քաղաքացիք կարող են դիմել Թարգմանչին հետեւեալ հասցէով՝

Тифлисъ. Базарная ул. домъ № 4,
Давиду Теръ - Давдянцъ.

3750

2013

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ГОУЗ-Арм.ССР
Ա. Մասեկյանի անվան
им. А. Мясникяна

891.
4-